ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	ՀՕ-10-Ն
Տիպ	Օրենք
Ակտի տիպ	Հիմնական ակտ (17.03.2012-01.04.2017)
Կարգավիճակ	Գործողությունը դադարեցված է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2012.03.07/13(887) Հոդ.187
Ընդունող մարմին	ՀՀ Ազգային ժողով
Ընդունման ամսաթիվ	09.02.2012
Ստորագրող մարմին	ՀՀ Նախագահ
Ստորագրման ամսաթիվ	01.03.2012
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	17.03.2012
Ուժը կորցնելու ամսաթիվ	01.04.2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2012 թվականի փետրվարի 9-ին

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 23.** **Կուսակցության գույքը**

1. Կուսակցության գույքը գոյանում է՝
1) կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարներից (մուտքի վճարներից), սահմանված չափով պարբերաբար կատարվող վճարներից (անդամավճարներից), եթե դրանք սահմանված են կուսակցության կանոնադրությամբ.
2) սույն օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված նվիրատվություններից.
3) սույն օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումից.
4) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:
2. Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի կուսակցությանը պատկանող գույքի կամ դրա մասի նկատմամբ: Կուսակցության գույքի նվիրատվությունը արգելվում է:
3. Կուսակցությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, իսկ կուսակցության անդամը պատասխանատվություն չի կրում կուսակցության պարտավորությունների համար:»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 25.** **Կուսակցություններին կատարվող նվիրատվությունները**

1. Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական և իրավաբանական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:
2. Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև կուսակցության համար կատարված աշխատանքների ու ծառայությունների (այսուհետ՝ նվիրատվություն) ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի միլիոնապատիկը, այդ թվում՝
1) մեկ առևտրային կազմակերպության կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը.
2) մեկ ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը.
3) մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:
3. Նվիրատվություններ չի թույլատրվում՝
1) բարեգործական կամ կրոնական կազմակերպություններից, ինչպես նաև դրանց մասնակցությամբ կազմակերպություններից.
2) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից, բացառությամբ սույն օրենքի 27-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման.
3) պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից և պետական ու համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից.
4) նվիրատվության կատարման օրվանից մինչև վեց ամիս առաջ գրանցված իրավաբանական անձանցից.
5) օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, ինչպես նաև օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանցից, եթե օտարերկրյա մասնակցի բաժնետոմսերը, փայը, բաժնեմասը տվյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում 30 տոկոսից ավելի է.
6) միջազգային կազմակերպություններից և միջազգային հասարակական շարժումներից.
7) քաղաքացիություն չունեցող անձանցից.
8) անանուն անձանցից:
4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, նվիրատվության սահմանված չափից ավելի ստացված մասը կամ

նվիրատվությունն ամբողջությամբ, իսկ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 4-րդ և 7-րդ կետերով չթույլատրված նվիրատվությունները ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարիության դեպքում փոխանցել պետական բյուջե:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերով չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:

6. Նվիրատվություն կատարող ֆիզիկական անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը, բնակության վայրը, իսկ իրավաբանական անձինք՝ իրավաբանական անձանց միջև անկանխիկ հաշվարկի կանոններով պահանջվող բոլոր տեղեկությունները:

7. Կուսակցությանը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի դրամական հատկացումները կատարվում են անկանխիկ:

8. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված համապատասխան նվիրատվությունների ստացման և դրանք օրենքով սահմանված ժամկետներում համապատասխանաբար պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքում կուսակցության համապատասխան պաշտոնատար անձը (անձինք) օրենքով սահմանված կարգով ենթարկվում է (են) պատասխանատվության:»:

Հոդված 4. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «ընտրարշավներ անցկացնելու» բառերը փոխարինել «նախընտրական քարոզչություն իրականացնելու» բառերով:

Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 28.** **Կուսակցությունների հաշվետվությունները պետական մարմիններին**

1. Կուսակցությունները պետական մարմիններ ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

2. Կուսակցությունը պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, մամուլում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվություն (այսուհետ՝ հաշվետվություն) և օրենքով նախատեսված դեպքերում դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաև սահմանված կարգով այն տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների և ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաև ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը: Հաշվետվության հրապարակման և ներկայացման կարգը (ներառյալ՝ հաշվետվության ձևը) սահմանում է պետական լիազոր մարմինը: Կուսակցության կողմից նախընտրական քարոզչության նախապատրաստման և իրականացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:

4. Կուսակցության կողմից սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական լիազոր մարմինը, իսկ օրենքով սահմանված դեպքերում իրականացնում են նաև այլ իրավասու մարմինները՝ իրենց իրավասություններին և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան: Կուսակցության հրապարակած և պետական լիազոր մարմին ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար պետական լիազոր մարմնի պահանջի դեպքում կուսակցությունը պարտավոր է երեք օրվա ընթացքում պետական լիազոր մարմնին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն կուսակցության դրամարկղային և բանկային մուտքերի և ելքերի վերաբերյալ, նախնական հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթեր:

5. Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության հաշվետվությունում:

6. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վճարումներից ստացված ընդհանուր գումարի հետ կուսակցության հաշվետվությունում նշվում է նաև նշված վճարումները կատարած կուսակցության անդամների թիվը:

7. Սույն օրենքով սահմանված հաշվետվությունները չհրապարակելը կամ չներկայացնելը կամ սույն օրենքով սահմանված կարգին չհամապատասխանող հաշվետվություններ հրապարակելը կամ ներկայացնելը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-ին հոդվածով.

«**Հոդված 28.1.** **Կուսակցությունների հաշվետվությունների աուդիտը**

1. Այն կուսակցությունները, որոնց ակտիվների արժեքը գերազանցել է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը, պարտավոր են հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ:

2. Սույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կարգով պետական բյուջեից ֆինանսավորում ստացած կուսակցությունները պարտավոր են հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ:»:

Հոդված 7. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել, իսկ 4-րդ կետից հանել «եթե» բառը:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Ս. Սարգսյան**

2012 թ. մարտի 1
Երևան
ՀՕ-10-Ն